



ՅԻՒՆԻՒԻ
ՅԱՒՏԱՍԱՑՈՂԵՐԸ
ԿԸ ՇԱՏԱԿ

10 ՏԱՐԵԿԱՆ, Ա. ՄԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍ

ԵԿԵՂԵՑԻՆ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ Է 7

1. Յիսուսի Համբարձումը	9
2. Հոգեգալուստ	15
3. Իմ անունովս հաւաքուիլ	21
4. Եկեղեցին կը տարածէ Յիսուսի Աւետարանը	27

Բ. ՄԱՍ

ՊԵՏՔ Է ՎԿԱՅԵՆՔ 33

5. Պիտի յայտարարենք ամէն տեղ	35
6. Ստեփանոս՝ առաջին սարկաւագը	41
7. Սուրբ Ստեփանոս՝ առաջին նահատակը	47
8. Առաջնորդել՝ ծառայելով	53

Գ. ՄԱՍ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ ԱՌՈՐԵԱՅ ԿԵՎԱՔ 59

9. Նորակազմ Եկեղեցւոյ անդամները միասին կ'աղօթեն	61
10. Նորակազմ Եկեղեցւոյ անդամները իրարու հոգ կը տանին	67
11. Անոնք միասին աղօթեցին	73
12. Տարբեր ենք՝ բայց Տիրոջմով միացած	79

Դ. ՄԱ

ՎԿԱՅԵՆՔ ԱՄԷՆՈՒՆ 85

13. Սամարացիներուն եւ եթովպիացի բարձրաստիճան պաշտօնեային դարձը 87
14. Պողոս առաքեալի դարձը 93
15. Կոռնելիոս՝ առաջին հեթանոսը որ քրիստոնեայ դարձաւ 99
16. Հեթանոսներուն մկրտութիւնը կը բացատրուի 105

Ե. ՄԱ

ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՏՕՆԵ 111

17. Հրեշտակներ եւ հրեշտակապետներ 113
18. Յիսոնակի պահը 119

ԱՊՈԹՔՆԵՐ՝ 10 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 125

ԵԿԵՂԵՑԻՆ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ Է



Յիսուս իր Հօր՝ Աստուծոյ քով
Վերադարձաւ իր յարութենէն քառասուն օրեր ետք:
Ան Սուրբ Հոգին ղրկեց իր հետեւորդներուն՝ Եկեղեցին:
Ամէն անգամ երբ Եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցուի, Յիսուս
ներկայ կ'ըլլայ այնտեղ: Սուրբ Հոգին կը զօրացնէ Եկեղեցին,
որպէսզի անիկա աշխարհին պատմէ Աստուծոյ
թագաւորութեան մասին:



Խօսք՝ ուղղուած ծնողներուն

Մեր յարուցեալ Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս Երկրի վրայ մնաց քառասուն օրեր Եւ բազմաթիւ առիթներով երեւցաւ իր աշակերտներուն:

Ան Երկինք համբարձաւ իր առաքեալներուն ներկայութեան: Այնպէս ինչպէս խոստացած էր, Ան Սուրբ Հոգին դրկեց, որպէսզի զօրացնէ ու առաջնորդէ Եկեղեցին՝ իր հետեւորդները: Իսկ Եկեղեցին, հաւատարիմ Յիսուսի պատուերին, միշտ կը հաւաքուի Սուրբ Պատարագի համար, որու ընթացքին Յիսուսի ներկայութիւնը կը զգայ: Եկեղեցին, իբրև Քրիստոսի ներկայութիւնը Երկրի վրայ, Անոր սկսած գործը կը շարունակէ, Աւետարանի Բարի Լուրջ Եւ Աստուծոյ թագաւորութեան աւետիսը տարածելով ամբողջ աշխարհին:

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Մինչ անոր կը նայէին, Յիսուս երկինք համբարձաւ,
եւ ամպ մը ծածկեց զինք անոնց տեսողութենէն:

Ըստ Գործք Առաքելոց 1.9



Գործոն...

Շատ յաճախ մենք կ'ուզենք որ ամէն ինչ շուտով ոլլայ: Կ'ուզենք նորութիւններ սորվիլ, բայց առանց շատ ժամանակ տրամադրելու: Անցեալ օր կը մտածէի գրել սորվելու մասին: Անդրադարձայ որ մէկը անպայման պէտք է ժամանակ տրամադրէր ու սորվեցնէր ինծի: Լաւ ուսուցիչ մը միշտ աւելի ժամանակ կը տրամադրէ սորվեցնելու համար:

Երբ փոքր երեխայ էի, թուղթի վրայ գիծեր կը գծէի: Օր մը, մայրս ինծի տուաւ նոր մատիտ մը, եւ ձեռքեւ բռնելով համբերութեամբ սորվեցուց ինծի քանի մը պարզ տառեր գրել այրութենէն: Անշատ դանդաղ գրեց եւ սիրայօժար սորվեցուց ինծի:



Յետոյ երբ դպրոց գացի, ուսուցիչները մեզի սորվեցուցին թէ ինչպէ՞ս պիտի գրէինք մնացեալ տառերը: Քանի մը տարի վերջ ես արդէն սորվեցայ իմ մտածումներս թուղթի վրայ գրել:

Մայրս գիրքերէ հատուածներ ալ կը կարդար ինծի: Յետոյ, դասարանին մէջ, մեր ուսուցիչները աւելի սահուն ընթերցանութիւն սորվեցուցին մեզի: Յետոյ ունեցանք գիրքերու ամբողջ աշխարհ մը՝ պատմութիւններ, բանաստեղծութիւններ, եւ կարդալով սկսանք վայելել զանոնք: Առանձին սկսանք կարդալ այդ գիրքերը, որովհետեւ անոնք որոնք մեզի սորվեցուցին կարդալ, իրենց ժամանակը տրամադրած էին մեզի: Յիմա որ այլեւս անոնք չեն շարունակեր սորվեցնել, մենք մեր սորվածները օգտագործելով կրնանք առանձին կարդալ:


Կարդալու եւ գրելու կարողութիւնդ օգտագործէ, եւ այս տողերուն մէջ գոյն վերջին անգամ քու կարդացած գիրքիդ կամ պատմութեամ անունը:

Երբ կարդաս Աստուածաշնչական պատմութիւնը, զտիր այն ուսուցիչը, որ նման է ծիշտ հիմա կարդացած ուսուցիչիդ, կամ այն անձին, որ քեզի գրել կարդալ սորվեցուց:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՋԵՆ

ՅԻՍՈՒՍ ԻՐ ՀՈՎ ՔՈՎ Կ'ԵՐԹԱՅ

ՀԱՅ ՂՈՒԿԱՄ 24.33-35, ԳՈՒԹՔ ԱՊԱՔԵԼՈՅ 1.1-11



Երկու աշակերտները որոնք Յիսուսը տեսած էին Էմմառնսի ճամբուն վրայ յարութենէն ետք, շատ զարմացած էին: Անոնք Երուսաղէմ վերադարձան եւ տասնըմէկ աշակերտները միասին հաւաքուած գտան: Տասնըմէկ աշակերտները ըսին անոնց. «Տերը յարութիւն առած է: Ան Սիմոնին երեւցած է»: Յետոյ անոնք պատմեցին թէ ի՞նչ պատահեցաւ իրենց ճամբու ընթացքին, եւ թէ ինչպէ՞ս իրենք ճանչցած էին Յիսուսը, երբ Ան հացը կտրելով տուած էր իրենց որպեսզի ուտեն:


Երբ անոնք ասիկա կը պատմէին, յանկարծ Յիսուս եկաւ եւ իրենց մէջտեղ կեցաւ: Ան ըսաւ. «Ողջո՞յն ձեզ»: Անոնք ցնցուեցան ու շատ վախցան՝ կարծելով որ ոգի մը կը տեսնեն: Ան ըսաւ անոնց. «Ինչո՞ւ վախցած էք, եւ ինչո՞ւ կը կասկածիք: Նայեցէք իմ ձեռքերուս ու ոտքերուս, տեսէք, ես եմ: Շօշափեցէք զիս, ոգի մը

մարմին ու ոսկոր չ'ունենար, բայց ես ունիմ»: Եւ ասիկա ըսած ատեն, Ան իր ձեռքերն ու ոտքերը ցոյց տուաւ անոնց:

Առաքեալները շատ ուրախացան, բայց դեռ շատ չին հաւատար եւ մտածումներու մէջ էին: Յիսուս ըսաւ անոնց. «Ուտելիք ու նի՞ք»: Անոնք իրեն տուին խորոված ծուկ, եւ Ան առաւ ու իրենց դիմաց կերաւ զայն:

Ապա Յիսուս ըսաւ. «Այս խօսքերը ըսի ձեզի երբ ձեր հետ էի, թէ ինչ որ գրուած է Սուլը Գիրքերուն մէջ իմ մասին, պէտք է որ կատարուի»: Ան Սուլը Գիրքերը բացատրեց անոնց, եւ ըսաւ. «Սուլը Գիրքերուն մէջ գրուած է, որ Փրկիչը՝ Մեսիան պէտք է չարչարուի եւ ապա՝ երրորդ օրը յարութիւն առնէ մեռելներէն: Այստեղ գրուած է նաեւ, որ մեղքերէ հրաժարելու եւ Աստուծոյ ներողութեան արժանանալու մասին պէտք է բոլոր ազգերուն քարոզուի, Երուսաղէմն սկսեալ»:

«Այս բոլորին մասին դուք իմ վկաներս պիտի ըլլաք: Եւ հիմա ես ձեզ կը դրկեմ՝ Յօրս խոստումը կատարելու: Ուստի, այս քաղաքին մէջ մնացէք, որովհետեւ շուտով Սուլը



Յոգին պիտի ստանաք: Դուք գորութիւն պիտի ստանաք երբ Սուրբ Յոգին գայ ձեր վրայ: Յետոյ, դուք իմ վկաներս պիտի ըլլաք Երուսաղէմի, Յուղայի եւ Սամարիայի մէջ, եւ աշխարհի ամէն կողմը»:

Ապա Յիսուս անոնց հետ քալեց մինչեւ Բեթամիա, եւ յետոյ ձեռքերը վեր բարձրացուց, օրինեց զիրենք: Երբ օրինեց, դէպի վեր՝ երկինք բարձրացաւ: Անոնք սկսան երկրպագել Յիսուսի եւ Երուսաղէմ Վերադան շատ ուրախ ու խանդավառ: Ամէն օր տաճարին մէջ կ'օրինեին Աստուած:

ՄՏԱԾԵԱՔ ՊԱՏԱՌԻԹԵԱՆ ԽԱԽԻ

Քու բառերովդ ամբողջացուր այս նախադասութիւնները.-

Երբ Յիսուս իր առաքեալներուն խոստացաւ թէ իրենք Սուրբ Յոգին պիտի ստանան, անոնք զգացին –

Յոգեւոր բառարան

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Սուրբ Գիրքի գրութիւնները: Ասոնք Աստուծոյ ծրագիրը կը ներկայացնեն այս աշխարհի համար, ինչպէս նաև կը պատմեն Յիսուս Քրիստոսի՝ Փրկիչին մասին:

ՎԿԱՅ

Մէկը որ ականատես կը դառնայ դէպքի մը եւ անոր մասին կը պատմէ ուրիշներուն: Առաքեալները Յիսուսի վկաները դարձան, որովհետեւ ուրիշներուն պատմեցին Անոր մասին:

ՔԱՒՈՂ


Փրկիչ, կամ անձ մը, որ կորսուածը կը գտնէ: Յիսուս Քրիստոս մեզ կ'ազատէ ու իր Յօր՝ Աստուծոյ կը վերադարձնէ:

Առաքեալները շատ ուրախ էին երբ Երուսաղէմ Վերադան, որովհետեւ –

ՄՏԱԾԵ ՊԱՏԱՄ'

- 1.- Այս պատմութեան մէջ ո՞վ կը նմանի այն ուսուցչին, որուն մասին նախապէս կարդացիր: Ի՞նչ նմանութիւն ունին անոնք իրարու հետ:
- 2.- Պատմէ՛ դէպք մը կեանքեղ, երբ զգացած ես Յիսուսի ներկայութիւնը եւ առաջնորդութիւնը:

Համբարձման տօնը կը տօնեմք



Յիսուսի Համբարձման տօնը Եկեղեցւոյ 12 գլխաւոր տօներէն մէկն է: Այդ օր մենք կը յիշենք, թէ Յիսուս երեք տարիներ երկրի վրայ ուսուցանելէ ետք, երկինք՝ իր քով գնաց: Այս երկինք երթալը կը կոչուի «համբառնալ», ուստի կ'ըսենք «Յիսուս երկինք համբարձաւ»:

Իր աշակերտներուն աչքերէն ծածկուելէ առաջ, Յիսուս անոնց յիշեցուց այն խոստումը, զոր Աստուած տուած էր: Ան խոստացած էր որ առաքեալները Սուրբ Յոգիին զօրութիւնը պիտի ստանային: Այն ատեն անոնք պիտի կարենային երթալ ուրիշ երկիրներ ու բազմաթիւ այլ ժողովուրդներու ըստին, թէ Աստուծոյ հետ յափտեան պիտի ապրին Անոր բազաւորութեան մէջ:

Համբարձման դէպքը ներկայացնող այս մանրանկարին մէջ հետեւեալներուն ուշադրութիւն դարձուցէք.—

- 1.- Համբարձումը տեղի կ'ունենայ Զիթենեաց Լերան վրայ: Նայեցէք ժայռոտ լեռներուն եւ ծիրենիի կանաչ ոստերուն:

- 2.- Գտէք Ս. Կոյս Մարիամը, որ մանրանկարին

ճիշդ մէջտեղն է եւ կ'աղօթէ:

3.- Նայեցէք Մարիամի շուրջը կանգնած առաքեալներուն, որոնք վկան կը հանդիսանան համբարձման: Առաքեալներէն ո՞վ բացակայ է եւ ինչո՞ւ:

Համբարձման շարական

Սիաւասիկ Համբարձման տօնին յատուկ շարականը: Քանի մը բառեր կը պակսին: Ամբողջացուցէք պակսող բառերը, օգտուելով վարի ցանկէն:

«Երկնային _____ բաղցր ձայնով նոր _____ կ'երգէին ըսելով. Ահա այս

է՝ փառքի _____, աշխարհի _____, մարդկային ցեղի _____:

Իշխաններ _____ բարձրացուցէք ծեր դռները, որպեսզի _____ Թագաւորը ներս մտնէ:

Երգ Ազատիչը Թագաւորը Իրեշտակները Փրկիչը Փառքի Վեր

Սրբուհի Շուշան Վստահեցաւ Յիսուսի խոստումին

Սրբուհի Շուշան Քաջն Վարդան Մամիկոնեանի աղջիկն էր: Իր բուն անունը Վարդենի կամ Վարդանուհի էր, սակայն փաղաքշական անունը Շուշանիկ էր: Անիկա մեծցած էր քրիստոնէական կրթութեամբ: Ոչ ոք կրնար մտածել որ անոր կեանքը շատ տիխուր վախճան մը պիտի ունենար: Անիկա ամուսնացաւ վրացիներու իշխան Աշուշայի զաւակին՝ Վազգէնի հետ եւ ունեցաւ երեք մանչ եւ մեկ աղջիկ զաւակներ: Իր հօր մահեն ետք, Վազգէն Պարսկաստան գնաց եւ հեթանոսական կրօնքի հետեւորդ դարձաւ: Երբ այս իմացաւ Շուշան, չուզեց իր ամուսինին երեսը տեսնել: Ուստի մօտիկ եկեղեցի մը մտաւ ու այնտեղ պահուըտեցաւ: Վազգէն շատ խիստ միջոցներու դիմեց զայն ետ պալատ բերելու, սակայն չաջողցաւ: Ան սկսաւ չարչարել Շուշանը:

Քրիստոնէական իր հաւատքին մէջ ամուր մնալով, Շուշան Վստահեցաւ Յիսուսի խոստումին, թէ մինչեւ վերջ համբերողը պիտի փրկուի: Ան հաւատաց թէ առաքեալները զօրացնող Սուլը Յոզիհն զինք ալ կրնայ գոտեպնդել, որպէսզի դիմանայ ամէն տեսակ չարչարներու:

Ի վերջոյ, բանտին մէջ, չարչարուած ու յոգնած մարմնով, Շուշան կնքեց իր կեանքը, միշտ իր հետ ունենալով փոքրիկ Աւետարան մը եւ Յիսուսի խաչէն մասունք մը: Շուշան միշտ կը լսէր Յիսուսի խօսքը, զոր Ան ըսած էր իր առաքեալներուն. «Ես ձեզի հետ պիտի ըլլամ մինչեւ աշխարհի վերջը»:

1.- Շուշանը ինչպէ՞ս կարելի է նմանցել առաքեալներուն: Ի՞նչ զօրութեան կը սպասէին անոնք:




2.- Ըստ քեզի ինչպիսի՞ մէկն է Սուլը Շուշանը: Տկա՞՞ր, քա՞՞ծ, վախկո՞տ:

Քարտեսի պշկաբանք

Ասոնք քանի մը վայրեր են, որոնց մէջ, ըստ Յիսուսի, իր առաքեալները պէտք է վկայէին իր ճամփակութեան:

Կարմիր գոյնով նշեցէք Երուսաղէմը եւ ԲԵ-
թանիան: Կանաչով նշեցէք Սամարիան, իսկ
կապոյտով՝ Յուդան:



ԵՆՏԱՆԻՔԻՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Այս շաբթուան պատմութիւնը գլխաւորաբար կը կեղունանար Յիսուսի համբարձնան դէպքին վրայ, դէահ երկինք՝ իր Յօր քով, իր յարութենեն քառասուն օրեր ետք: Ահաւասիկ կարգ մը առաջարկներ ծեզի, որպեսզի տան մեջ կատարեր եւ աւելի հասկնալի դարձներ ամոնց սորված դասը:

1.- Πατριωτισμός οντοτητικός στον πλανήθηκε από την ιδέα της αυτονομίας και της επανάστασης. Τον ίδιο χρόνο, η Ελλάς έγινε μέρος της Ευρωπαϊκής Ένωσης, η οποία έφερε μεγάλες αλλαγές στην οικονομία, την πολιτική και την κοινωνία. Η Ελλάς έγινε μέρος της Ευρωπαϊκής Ένωσης, η οποία έφερε μεγάλες αλλαγές στην οικονομία, την πολιτική και την κοινωνία.

2.- Թուղթ մը կսրբեցք եւ անոր վրայ գրեցք «Ես ծեզի հետ պիտի ըլլամ, եւ ոչ ոք իշխանութիւն ունի ծեր Վրայ»: Ապա զայն փակցուցքը հաստ մոմին Վրայ ու դրէ այնպիսի տեղ մը ուր ամբողջ ընտանիքը կը հաւաքուի աղօթելու համար: Եթէ մոմը շատ հաստ է, քանի մը այլ տողեր ալ կրնաք աւելցնել Վրան: Եթը ընտանեօր հաւաքուիք աղօթելու համար, մոմը վառեցք, որպէսզի ամէն ոք անդրադառնայ Յիսուսի խոստումին զոր մեզի տուաւ Աս: Զգոյշ եղէք ոք աղօթքի բուլը կրակ չառնէ:

3- Ընտանեօթ փորձեցիր երգել կամ արտասանել Քամբարձման շարականի առաջին երկու տուները.

«Մեր Տէրը Երկինք համբարձաւ, իր աշակերտներուն ըստով. ՄՆացէ՞ Երուսաղէմ Քաղաքին մէջ, մինչեւ որ Երկինքի զօրութիւն ստանաք»:

**«Սուրբ առաքեալմերը միասիրու ու միակրօն, միասնաբար նստած սուրբ վերնատան մէջ,
կը սպասէին Սուրբ Քոջիի գալուստին»:**

ՀՈԳԵԳԱԼՈՒՏ

Ամէն ներկաները Սուլը Յոգիով լեզուեցան եւ սկսան
տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Յոգին խօսիլ կու տար:

Ըստ Գործք Առաքելոց 2.4



Գուտըն...

Գիտէի՞ր թէ շատեր այնպէս կը խորհին, թէ հրապարակաւ խօսիլը շատ դժուար է:


Անցեալ տարի ինծի պատահեցաւ ատիկա: Խումբ մը մարդոց դիմաց ելելով խօսիլը վախ ազդեց իմ վրաս:

Ինձմէ փոքր եղբայրս՝ Վաչէն աւելի դժուար կացութեան մէջ է: Ան իհւանդութիւն մը ունի, որ զինք կը ցնցէ ու երբեմն գետին կը ծգէ: Ան բնաւ չի գիտեր թէ ե՞րբ պիտի պատահի ատիկա. դպրո՞ցը, տա՞ն մէջ, բակին մէջ խաղացա՞ծ ժամանակ: Եթէ քովը ըլլամ, կ'օգնեն իրեն: Բայց ես միշտ իր հետ չեմ ըլլար: Մինչեւ իհմա չենք կրցած դեղ մը գտնել որ բուժէ զինք: Ամէնէն վատը այն է, որ մարդիկ երբեմն իր վրայ կը խնդան, երբ տեսնեն իր ցնցուիլը կամ գետին իյնալը:

Քիմա 11 տարեկան եմ դեռ, եւ դրամ չունիմ որ նոր դեղեր ճարեմ իրեն համար: Բայց ես եղբայրս շատ կը սիրեմ, եւ ուզեցի անպայման ճար մը գտնել իրեն համար:

Ուստի, որոշեցի խօսք մը պատրաստել եւ զայն կարդալ զանազան խումբերու: Անոր մէջ գրած եմ Վաչէին իհւանդութեան մասին եւ կը յիշեցնեմ բոլորին, թէ Աստուած կ'ուզէ որ մենք օգնենք ու զօրավիզ կանգնինք իրարու: Քիմա կրնաք հարց տալ, որ այեւս ես դժուարութիւն ունի՞մ եւ կ'ամչնա՞մ մարդոց դիմաց խօսելէ: Այո՛, բայց ոչ այնքան ինչպէս նախապէս: Կը խորհիմ որ եթէ ստիպուած ըլլաք՝ ամէն ինչ ալ կ'զնէք անոր համար, զոր շատ կը սիրէք:

Գրեցէք այնպիսի աշխատանքի մը մասին, զոր անցեալ տարի չէիք կրնար ընել եւ իհմա կրնաք: Ի՞նչ պէտք է սորվիք այն նոր աշխատանքը կատարելու համար:



Աստուածաշնչական պատմութեան մէջ ուշադրութիւն դարձուցէք, թէ ի՞նչ կարողութեամբ օժտուեցան առաքեալները Սուլը Յոգին ստանալէ ետք:

Սուրբ Հոգին ՏՐՈՒԵՎԱ

ՀԱՅ ՂՈՒԿԱՒ 24.49, ՅՈՎԱԿԱՆԻ 14.25-26, ԳՈՐԾՔ ԱՊԱՔԵԼՈՅ 2.2-41



Պետեկոստի օրը, առաքեալները իրարու քով հաւաքուած էին: Յանկարծ երկինքն ձայն մը լսուեցաւ զօրաւոր հովի ննան, եւ ամբողջ տունը լեցուց, ուր նստած էին: Կրակէ լեզուներ երեւցան եւ գալով հանգչեցան անոնցմէ իրաքանչիրին վրայ: Անոնք Սուրբ Յոդիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Յոդին խօսիլ կու տար անոնց:

Յաւատացեալ իրեաներու բազմութիւն մը զանազան երկիրներէ եկած էր Երուսաղէմ, մասնակից դառնալու համար Պետեկոստի տօնին: Անոնք զարմացած էին լսելով առաքեալներուն խօսքը: Անոնք ըսին. «Այս խօսողները ամէնքն ալ գալիլիացիներ չե՞ն: Բայց մեր երկիրներու լեզուներով ինչպէ՞ս կը խօսին: Ինչպէ՞ս կ'ըլլայ որ իրենց ըսածները Աստուծոյ պատուիրաններուն մասին, բոլոր կը հասկնանք: Ինչպէ՞ս կ'ըլլայ ասիկա»:

Բազմութեան մէջէն կարգ մը մարդիկ սկսան կատակել եւ ըսել. «Այս մարդիկը գինովցած են զօրաւոր գինիով»:

Այն ատեն Պետրոս բարձր ձայնով սկսաւ խօսիլ բազմութեան ու ըսել. «Յուղայի եւ ամբողջ Երուսաղէմի մէջ ապրող մարդիկ: Մենք գինովցած չենք, ինչպէս ծեզմէ ոմանք կը կարծեն. նայեցէք, տակաւին առտուան ժամը 9 է:

«Չեզի կը խօսիմ այն ինչ որ Յովել մարգարէն գրած է Սուրբ Գիրքին մէջ՝ Տիրոջ մեծ եւ փառաւոր օրուան մասին: Այդ օրը ան որ Տիրոջ անունը կանչէ, պիտի փրկուի:

«Դուք, խրայէլացիներ, մտիկ ըրէք ինծի: Աստուած իրաշըներ գործեց, նշաններ տուաւ ու զօրութիւն յայտնեց Յիսուս Նազովեցիի ծեռքով: Աստուծոյ ծրագրին համաձայն եւ իր գիտութեամբ, այս Յիսուսը ձերբակալուեցաւ եւ մահուան դատապարտուեցաւ Աստուծոյ Օրէնքին հակառակ:

«Բայց մահը Յիսուսի վրայ իշխանութիւն չունի: Իր նախորդներէն Դաւիթ թագաւոր հետեւեալը կ'ըսէ իր մասին "Կեանքի ճամբան ցոյց տուիր ինծի, եւ զիս քու ներկայութեանդ ուրախութեամբ պիտի լեցնես":

«Մենք ամէնքս վկաներ ենք թէ Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն: Ամբողջ Խրայելը գիտ որ Ան է Տէրը եւ Մեսիան. այն Յիսուսը, որ ծեզմէ ոմանց կողմէ խաչուեցաւ»:

Ժողովուրդը երբ լսեց այս հեղինակաւոր խօսքերը, հարցուց Պետրոսի թէ ի՞նչ պէտք է ընէ: Իսկ ան խնդրեց անոնցմտ որ դարձի գան ու մկրտուին: Ան ըսաւ. «Աստուծոյ խոստումը ծեզի տրուած է, ինչպէս նաեւ ծեր գաւակներուն, եւ բոլոր անոնց որոնք հեռու են, եւ անոնց որոնք Աստուած իրեն կը կանչէ»:

Շուրջ երեք հազար հոգի այդ օր Եկեղեցւոյ անդամ դարձաւ:

Հոգեւոր բաժարան

ՄԱՐԳԱՐԵ

Անձ մը, որ մարդոց կը յայտնէ Աստուծոյ կամքը: Երբեմն մարգարէն կը յայտնէ մարդոց թէ ի՞նչ կրնայ պատահիլ եթէ Աստուծոյ կամքը կատարեն, կամ՝ հակառակ՝ չհետեւին Անոր խօսքերուն: Բայց մարգարէն բախտագուշակ մը չէ:

ՅՈՒՂԻՄԱ ՄԱՐԳԱՐԵՒԻԻ

ԵՂԻՄԱ ՄԱՐԳԱՐԵ


ԵՐԵՄԻՄԱ ՄԱՐԳԱՐԵ

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐԵՒԻԻ

ՅՈՎԱՆԱ ՄԱՐԳԱՐԵ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵ

Սուրբ Եղիա Մարգարէ



ՄՏԱԾԵԿ ՊԱՏԱՌԻԹԵԱՆ ՄԱՍԻՆ

1.- Ի՞նչ պիտի զգայիր եթէ Պեճտեկոստի օրը հոն ըլլայիր, եւ լսէիր առաքեալներուն տարբեր լեզուներ խօսիլը: Քովդ կեցողներուն ի՞նչ պիտի ըսէիր:

2.- Ինչո՞ւ համար Պեճտեկոստի օրը կը կոչուի Եկեղեցւոյ հիմնադրութեան օրը:

Հոգեգալուստի տօնը



Հրեական Պենտեկոստէն հունձքի տօնն էր: Անիկա յիշուած է Յին Կտակարանին մէջ: Բայց այդ օրը երբ Երուսաղեմի մէջ Պետրոս առաքեալ խօսեցաւ բազմութեան, Պենտեկոստէն նոր տօն մը դարձաւ: Յիմա անիկա դարձաւ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու օր ոչ միայն հունձքին համար, այլ նաեւ այն բոլոր շնորհքներուն համար որ Սուլը Հոգին տուաւ: Սուլը Հոգիին առաջնորդութեամբ անոնք կարողութիւն ստացան Աստուծոյ սիրոյն ու թագաւորութեան մասին պատմելու ուրիշներուն:

Ասիկա Հոգեգալուստի մանրանկարն է: Անիկա մեզի այդ օրուան պատմութիւնը չի պատմեր: Այլ ցոյց կու տայ թէ հ՞նչ պատահեցաւ այդ օր՝ Հոգեգալուստի պահուն: Ուշադրութեամբ նայեցէք նկարին, յետոյ կարդացէք վարի նախադասութիւնները: Յետեւեցէք ձեր ուսուցչի ցուցմունքներուն, որպէսզի համապատասխան բացատրութիւնը գտնէք.—

Նկարագրութիւն նկարի	Բացատրութիւն նկարի
<ol style="list-style-type: none"> Տասներկու մարդիկ նստած են: Անոնցմէ չորսը ոլորուած գիրքեր բռնած են: Տասներկու մարդոց նստած տեղին մէջտեղը պարապ է: Թագաւորի նմանող մարդ մը նկարին վարի մասը, մութին մէջ նստած է: Նկարին վերէն ճառագայթներ կ'իջնեն: 	<ol style="list-style-type: none"> Այս մարդիկը այն առաքեալներն են, որոնք Աւետարանները գրեցին՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս: Մէջտեղի պարապ բաժինը Յիսուսի վերապահուած է: Ան է Եկեղեցւոյ գլուխը, հակառակ անոր որ այլեւս զինք չենք տեսներ երկրի վրայ: Սուլը Հոգին լոյս եւ իմաստութիւն կը դրկէ երկինքն: Տասներկու առաքեալները միասին նստած են: «Թագաւորը» ամբողջ աշխարհին կը տիրէ, մութին մէջ նստած: Սուլը Հոգիին զօրութեամբ, առաքեալները լոյս բերին աշխարհին իրենց կատարած քարոզութեամբ:

Կասորեւիք սշխատաբ յը

Սուրբ Յոգին Պենտէկոստի օրը զօրաւոր հովի մը նման եկաւ: Մենք երթեմն հովին ոյժը կ'օգտագործենք մեծ առարկաներ շարժելու համար, ինչպէս՝ մեծ հովահարներ եւ կամ փոքր առարկաներ, ինչպէս նկարին մէջ գծուած հողմանիւը:

Բայց Սուլը Յոդին մեզի կու գայ տարբեր կերպերով: Մեր մկրտութեան պահուն Սուլը Յոդին կը ստանանք Սուլը Միւռոնին օծումով: Մկրտող հոգեւորականը այդ սուլը իւղով կ'օժէ մեզ եւ կ'աղօք որ Աստուած առաջնորդէ մեր քայլերը մեր ամբողջ կեանքի ընթացքին, որպէսզի արժանի ըլլանք իր թագաւորութեան:

Յողմանիկ ծեւով գօտէ բան մը որ Սուրբ Յոգին կը կատարէ:



ԵԿԵՔ ՄԻԵՒԻՆ ՍՊՐՎԻՔ...

Լուծեցէք հետեւեալ խաչբառը.—

Ուղղահայեաց

- 1) Այս անունով առաքեալը հիրաշալի քարող
խօսեցաւ ժողովուրդին, այդ մեծ տօնին օրը:

2) Այդ օրը քանի՞ հազար հոգի մկրտուեցաւ:

5) Գործք Առաքելոց 2.10 համարին մէջ նշուած 3-րդ երկիրը:


6) Գործք Առաքելոց 2.9 համարին մէջ նշուած առաջին երկիրին անունը:

7) Գործք Առաքելոց 2.10 համարին մէջ նշուած ուրիշ տեղանուն նույնականացնելու մը:

11) Այդ օր առաքեալները խօսեցան տարբեր բարբառներով
կամ...:

Հորիզոնական

- 3) Յիսուս Քրիստոսի յարութեան եւ այդ տօնին միջեւ գտնուող օրերուն քանակը (Տե՛ս «Կեանքը Եկեղեցւոյ մէջ» բաժինը):
 - 4) Տօնին անունը, որուն առիթով առաքեալը ճառ խօսեցաւ:
 - 8) Առաքեալները նախ զգացին Սուրբ Հոգին իբրեւ սաստիկ ի՞նչ բան:
 - 9) Քաղաքը՝ ուր տեղի ունեցաւ այս մեծ տօնը եւ հրաշքը:
 - 10) Անիկա հին տօն մըն էր, որ ժողովուրդին կողմէ կը նշուէր:



ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ


Այս անգամուան համար պէտք ունիք Աստուածաշունչ մը, մկրատներ, սրճագոյն թուղթ, ճերմակ թուղթ, փակցնելիք, գրիչներ եւ ներկելիք մատիտներ: Միասնաբար երգեցէք Յոգեզալուստի շարականը, որ արդէն ծանօթ է:-

**«Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծածայն հնչմամբ ի բարձանց,
ի նմանութիւն լուսոյ փայլման իրազինեաց անկիզելի զաշակերտսան,
մինչդեռ նստին ի սուրբ վերնատան»:**

Վերնատան մէջ աշակերտները նստած էին, ինչպէս շարականը կ'ըսէ, վստահաբար կը վախճային իրեաներու հալածանքէն: Բայց երբ Սուրբ Յոգին ստացան, իրենց վախը մոռցան եւ համարձակութեամբ սկսան քարոզել Յիսուսը: Անոնցմէ շատեր ծկնորսներ էին, պարզ մարդիկ, բայց իմաստութիւն տուաւ իրենց Սուրբ Յոգին եւ դարձան մարդոց որսորդներ, այսինքն՝ Աստուծոյ թագաւորութեան համար մարդ շահողներ:

ՀԱՏԱԿԻՔՈՎ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔ ԱՌ

- Սրճագոյն թուղթով ուրևկաններ շինեցէք:
- Ճերմակ թուղթով ձուկեր կտրեցէք: Մտածեցէք ձեր ընտանիքի անդամներուն մասին, իբրեւ «մարդոց որսորդներ»: Ինչպէս պէտք է ապրինք, որ ուրիշներն ալ մղենք Աստուծոյ ճանաչողութեան:
- Զանազան տեսակի ձուկերը երբ կտրես, զանոնք տան մէջ փակցուր, իբրեւ մնայուն յիշեցում:
- Անգամ մը եւս փորձեցէք երգել շարականը:



ԻՄ ԱՆՈՒՆՈՎՍ ՀԱԻԱՔՈՒԻԼ

Որովհետեւ ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս,
ես հոն եմ՝ անոնց միջեւ:

Ըստ Մատթեոսի 18.20



Գոտո՞ր...

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ Աման միասին աշխատինք

Բնաւ լսա՞ծ էք այն խօսքը որ կ'ըսէ. «Երբ օգնական ձեռքեր ունենաս, բեռդ կը թերեւնայ»: Ասիկա կը նշանակէ, որ մեծ աշխատանք մը աւելի շուտով իր աւարտին կը հասնի, երբ մարդիկ օգնեն իրարու: Այս պարագային գործը մեկ մարդու վրայ չի ծանրանար, որովհետեւ անիկա բոլորին միջեւ կը բաժնուի:



Միայն մեր պաշտօնները եւ աշխատանքները չեն որ աւելի կը դիւրանան երբ մարդիկ օգնեն իրարու: Այլ, եթէ լաւ լուր ալ ունենանք, պէտք է բաժնենք ուրիշներուն հետ: Երբ դժուարութիւններ ունենանք, շատ աւելի լաւ կ'ըլլայ երբ զանոնք մտիկ ընող մարդիկ ունենանք: Անոնք կրնան մեր մտահոգութիւնը եւ տրտմութիւնը բաժնել մեզի հետ: Անոնք կրնան մեզի ուղղութիւն տալ, որպեսզի կարենանք լուծել մեր հարցերը:



Միաւասիկ երեք կացութիւններ ներկայացուած են այստեղ, որոնց մէջ անձ մը ուրախ պիտի ըլլայ, եթէ մարդիկ օգնեն իրեն:

Խումբին հետ միասին կարդացէք այն կացութիւնը, որ ուսուցիչը պիտի թելադրէ: Ապա միջոցներ որոնեցէք միասնաբար, ըսելով թէ ընկերները ինչպէ՞ս կրնան օգտակար դառնալ: Կրնաք ձեր գաղափարը գրի առնել եւ ներկայացնել թատերականօրէն, կամ կրնաք նկարով արտայայտել կամ գծանկարներ պատրաստել:

1.- Յովիկը պէտք է քանի մը տողեր գոց սորվի գիտութեան դասին համար: Բայց բառերը շատ դժուար են, եւ շատ դժուարութիւն կ'ունենայ իր միտքը պահելու զանոնք: Ընկերները ինչպէ՞ս կրնան օգնել իրեն:

3.- Յակոբը շատ աւելի կ'ուզէ խորանալ համակարգիչ սորվելու իր ծրագրին մէջ: Ան շատ վափաք ունի օր մը գործ գտնել այս ասպարեզեն ներս, երբ դպրոցը աւարտէ: Բայց իրենց տան մէջ համակարգիչ ունեցող չկայ, ոչ ալ անկէ հասկցող մէկը կայ: Տնեցիները բնաւ չեն կրնար օգնել իրեն: Ընկերները ինչպէ՞ս կրնան օգնել Յակոբին:


2.- Սիլվային մայրը վաղը պիտի վերադառնայ ճամբորդութենն մը: Սիլվան ու իր եղբայրը՝ Սարգիսը կ'ուզեն որ իրենց տունը մաքուր ու կոկիկ վիճակի մէջ տեսնել իրենց մայրը: Անոնք կ'ուզեն նաեւ որ պարզ բայց համով կերակուր մըն ալ պատրաստ ըլլայ: Բայց երկուքն ալ երեկուընէ ի վեր հիւանդ են: Անոնք իրենց ծրագրածը պիտի չկարենան կատարել: Ընկերները ինչպէ՞ս կրնան օգնել իրեն:

Աստուածաշնչական պատմութիւնը կարդացած ժամանակ, ուշադրութիւն դարձուցէք թէ ինչպէ՞ս առաջին դարու Եկեղեցին անդամները, որ Դոգեգալուստի օրը հիմնադրուեցաւ, իրարու օգտակար կը հանդիսանային:

ԱՍՏՈՒԱԾԱՇԱՌԱՋԵՆ

ՅԻՍՈՒՍ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐԱՆԵՐԸ՝ ԱՌԱՋԵՎԱԿԱՆԵՐԸ

ՀԱՅ ՄԱՏԻԹՈՒ 18.19-20, ՂՈՒԿԱՆ 24.33-43, ԳՈՐԾՔ ԱՌԱՋԵՎԱԿԱՆ 1.12-14 և 2.42



Եմնառուսի ճամբուն վրայ



«Յոն ուր երկու կամ երեք հոգի հաւաքուին
իմ անունովս, ես հոն՝ անոնց միջեւ եմ»

Նախքան իր համբարձումը դէպի երկինք, Յիսուս բազմաթիւ պատուերներ տուաւ իր աշակերտներուն, ըսելով թէ ինչպէ՞ս պէտք է առաջնորդեն Եկեղեցին: Ան սքանչելի խոստում մըն ալ տուաւ անոնց, ըսելով. «Ճշմարիտ կ'ըսեմ ծեզի, որ երբ իմ անունովս խնդրանք ներկայացնեք, իմ Յօրս կողմէ ատիկա պիտի կատարուի ծեզի համար: Որովհետեւ հոն ուր երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս, ես հոն՝ անոնց միջեւ եմ»:

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ որ ինք անոնց հետ պիտի ըլլայ երբ մեռելներէն յարութիւն առնէ: Ինչպէս առաջին դասին մէջ տեսաք, Ան երեւցաւ անոնցմէ երկուքին, երբ անոնք միասին Եմնառուս կը ճամբորուին: Ապա Ան ամէնուն երեւցաւ, երբ միասին հաւաքուած էին: Ան կերաւ անոնց հետ, եւ իր ծեռքերուն ու ոտքերուն վրայի վերքերը ցոյց տուաւ անոնց: Ան ըսաւ անոնց որ միշտ միասին ըլլան, միասին աշխատին, միասին աղօթեն եւ օգնեն իրարու: Ան վստահեցուց անոնց որ ինչ որ ընեն, Ան իրենց հետ պիտի ըլլայ միշտ:

Ուստի, երբ Յիսուս երկինք համբարձաւ եւ այլեւս իրենց հետ պիտի չըլլար, անոնք Երուսաղէմի մէջ մնացին միասնաբար: Յաճախ աղօթեցին եւ իրարու հետ եղան Վերնատան մէջ, յիշելով այն սքանչելի գործերը որ Յիսուս կատարեց եւ իրենց սորվեցուց:

Յոգեգալուստէն ետք, ուրիշ շատ մը մարդիկ հետեւեցան առաքեալներուն, առաջին Եկեղեցւոյ անդամ դառնալով: Այս մարդիկը իրենց ժամանակն ու ոյժը աղօթքի տրամադրեցին: Առաքեալները սորվեցուցին անոնց, եւ ամէնքը բարեկամներ դարձան իրարու: Անոնք միասին կ'ուտէին, միասին կը սորվէին եւ միասնաբար Աստուած կը պաշտէին: Անոնք իրարու միացած էն Յիսուս Քրիստոսի սիրով:

Մասնաքաղաքացիութեան մասին


1.- Իբրեւ վերաբաղ մինչեւ հիմա ձեր կարդացածներուն, ճշդեցէք ստորեւ դրուած նախադասութիւններուն ճիշդ հերթականութիւնը, վարի տուփերուն մէջ դնելով այբբենական սկզբնատառերը.-

- ա) Յիսուս Երկինք՝ իր Յօր քով համբարձաւ:
- բ) Յիսուս իր Երկու առաքեալներուն Երեւաւ, Երբ անոնք ճամբու ընթացքին կը քալէին:
- գ) Առաքեալները միասին մնացին Երուսաղէմի մէջ՝ աղօթելով ու աշխատելով:
- դ) Յիսուս մեռելներէն յարութիւն առաւ:
- ե) Առաջին Եկեղեցին հիմնադրուեցաւ Երբ մարդիկ հետեւեցան առաքեալներու օրինակին, անոնց հետ աղօթելով եւ անոնցմէ սորվելով:
- զ) Յիսուս իր բոլոր աշակերտներուն Երեւաւ Երբ անոնք միասին նստած էին, եւ կերակուր կերաւ անոնց հետ:

Յոգեւոր բառարան

ԻՄ ԱՆՈՒՆՈՎՍ ՀԱՒՔՈՒԻԼ

Երբ մարդիկ իրարու քով հաւաքուին, որովհետեւ Յիսուսը կը սիրեն եւ կ'ուզեն Անոր ծառայութիւն մատուցել ու պաշտել զԱյն, այն ատեն անոնք «հաւաքուած կ'ըլլան Անոր անունով», անոնք հաւաքուած կ'ըլլան Յիսուսի համար:



2.- Ի՞նչ բան կը կարծէք թէ պատճառ դարձաւ մարդոց որ հետեւին առաքեալներուն օրինակին, Յոգեալուստէն ետք: Առաքեալներուն մէջ ի՞նչ տեսան մարդիկ եւ ուզեցին անոնց պէս ապրիլ: Երկու Երեւոյթներ նշեցէք, որ առաքեալները կ'ընէին եւ ժողովուրդը տեսաւ ու սիրեց զանոնք:

Զգացի որ Յիսուս ինձի հետ է

ԿԵԱՆՔԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

ճանչնանք Սուրբ Պատարագը

Ուղղափառ Եկեղեցւոյ պաշտամունքին հիմնական մասը Սուրբ Պատարագն է: Սուրբ Պատարագի համար ընդհանրապէս Եկեղեցի կ'երթանք, թէեւ ուրիշ արարողութիւններ ալ կը կատարուին Եկեղեցւոյ մէջ: Սուրբ Պատարագը ընդհանրապէս Կիրակի առաւօտները կը մատուցուի: Ասիկա միակ արարողութիւնն է, որու ընթացքին Սուրբ Հաղորդութիւն կը ստանանք, իբրեւ Աստուծոյ բացառիկ պարզեւը:

Առաքեալներու օրով ապրած մարդոց նման մենք ալ իրարու քով կու գանք, միասին կ'աղօթենք եւ փառք կու տանք Աստուծոյ: Սուրբ Պատարագ կը կատարուի երբ մարդիկ իրարու քով հաւաքուին: Երբ Եկեղեցին դատարկ է ու ժողովուրդ չկայ, հոգեւորականը պատարագ չի մատուցաներ:

Որո՞նք են այն մարդիկը որ իրարու քով կը հաւաքուին Սուրբ Պատարագի համար:

Քահանան խորանին վրայ կ'ըլլայ՝

- Մեր աղօթքները Աստուծոյ ներկայացնելու,
- Աստուծոյ օրինութիւնը մեզի բերելու,
- Աւետարանը կարդալու,
- Քարոզ տալու,
- Սուրբ Հաղորդութիւնը բաշխելու համար:



Սարկաւագը խորանին վրայ կ'օգնէ քահանային՝

- Բուրվառով խնկարկելով,
- Առաքելական նամակը կարդալով,
- Աւետարանը կարդալով,
- Կարգ մը աղօթքներ կարդալով,
- Ժողովուրդին ուղղութիւն տալով, թէ ե՞րբ պէտք է ոտքի ելլեն ու ե՞րբ՝ նստին:



Դպրաց դասը՝

- Շարականներն ու պատարագի երգերը կ'երգէ,
- Երգեցողութեամբ կը պատասխանէ քահանային եւ սարկաւագին:



Դաւատացեալները Եկեղեցւոյ մէջ գտնուող ժողովուրդն են, որոնք՝

- Դպրաց դասին հետ կ'երգեն,
- «Ամէն» եւ «Տէր, ողորմեա» կ'ըսեն, քահանային եւ սարկաւագին երգեցողութեան իբրեւ պատասխան,
- Միասնաբար կ'աղօթեն,
- Քահանային Սուրբ Հաղորդութիւն կը ստանան:



Վերոյիշեալ բոլոր մարդիկը մաս կը կազմեն Սուլը Պատարագին: Մենք պետք է քով-քովի գանք, միասին աղօթենք եւ Աստուծոյ ներկայութեան միասնաբար Սուլը Հաղորդութիւն ստանաք: Մենք միշտ հրաւիրուած ենք ըլլալու Աստուծոյ Տան մէջ:

«Ամէն» բառը, որ դպրաց դասը յաճախ կ'երգէ իբրեւ պատասխան քահանային երգեցողութեան, «Այո» կը նշանէ, կամ՝ «Թող այդպէս ըլլայ»: Դպրաց դասը նաեւ «Տէր, ողորմեա» կ'երգէ, դարձեալ իբրեւ պատասխան քահանային կամ սարկաւագին երգեցողութեան:

Երբ դպրաց դասը «Տէր, ողորմեա» երգէ, կը նշանակէ որ ժողովուրդն ալ կը միանայ քահանային ու սարկաւագին խնդրանքին, որ Աստուծոյ օրինէ ու հոգ տանի մեզի:

Ահաւասիկ քանի մը արարքներ, որ քահանան, սարկաւագը, դպրաց դասը կամ ժողովուրդը կը կատարէ: Իւրաքանչիւր արարք վարի հաւկթաձեւ գունդին մէջ իր ճիշդ տեղը դուք: Եթէ արարք մը մէկէ աւելի ուրիշներ ալ կ'ընեն, անոնց բաժնին մէջ ալ դուք:

Սուլը Հաղորդութիւն կու տայ

Քահանային կամ սարկաւագին երգեցողութեան կը պատասխանէ

Կ'երգէ


Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնէ

Սուլը Հաղորդութիւն կը ստանայ

Առաքելական նամակը կը կարդայ

Աւետարանը կը կարդայ

Խորանին վրայ քահանային կ'օգնէ



Յիսուս կ'աղօթէ մեզի համար

Յիսուս երբ ըսաւ թէ պէտք է միասին ըլլանք միշտ եւ իրարու օգնենք, չըսաւ որ այդ շատ դիւրին գործ է: Աս չվատահեցուց մեզ թէ մենք միշտ համաձայն պիտի ըլլանք իրարու հետ: Բայց յստակօրէն ըսաւ, թէ Ինք կ'ուզէ որ մենք կարգ մը աշխատանքներ միասնաբար կատարենք, ինչպէս առաքեալները ըրին: Աս կ'ուզէ որ մենք միշտ հաւաքուինք իբրեւ մէկ Եկեղեցիի ընտանիք եւ միասին աղօթենք: Այսպէս ըրին առաքեալները Յոգեգալուստի օրը, երբ բազմաթիւ մարդիկ միացան առաջին Եկեղեցին, որ մինչեւ այսօր կը շարունակէ իր կեանքը:

Եկեղեցւոյ անդամները միշտ ալ համաձայն չեն ըլլար իրարու կարգ մը հարցերու գօնվ: Երբ Եկեղեցւոյ անդամները այսպէս անհամաձայն ըլլան, մեր Տէրը կ'ուզէ որ քով-քովի գան ու աղօթեն: Այսպիսով անոնք կրնան գիտնալ թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը, եւ թէ իրենք ի՞նչ պէտք է ընեն:

Ահա թէ ի՞նչ ըսաւ Յիսուս երբ աղօթեց իր Յօր, իր առաքեալներուն համար: Ուղղեցէք բառերը եւ դրէք իրենց ճիշդ տեղերը:

Ես կը _____ որ ամոնք _____ մէկ ըլլան: Ինչպէս Դուն, _____,

իմ մէջս ես, եւ ես _____ մէջդ, թող _____ ալ _____ մէջ ըլլան:

յիշա երմ մէնքըա րեմիսնդ նոնքա ուլք

ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Այսօտևան դասին գլխաւոր գաղափարը այն է, թէ Յիսուս Քրիստոս կը խոստանայ իր աշակերտներուն, որ երբ իրարու քով գան իր անունով, Ինք անոնց հետ պիտի ըլլայ: Աս կ'ըսէ նաեւ անոնց, որ միասին աշխատին, իրարու օգնեն եւ բարիք ընեն ուրիշներուն: Այս ձեւով, կ'ըսէ Ան, իր աշակերտները անբողջ աշխարհին կրնան ցոյց տալ թէ իրենք իսկապէս Յիսուսի հետեւորդներն են:

Ընտանեօք աշխատանք մը կատարեցէք, որ միաժամանակ հաճելի ըլլայ ու օգուտ մը բերէ ուրիշին: Կրնաք ընտանեօք լաւ ճաշ մը պատրաստել: Կրնայ նոյնիսկ անուշեղեն մը ըլլալ, որ ճաշեն ետք կրնաք իհրասիրել: Կրնաք ընտրել նաեւ ընտանիքն դուրս անձ նը, որուն պիտի իհրասիրեք ձեր պատրաստածը:

Ընտանիքի իւրաքանչիւր անդամին պարտականութիւն մը տուեք այս աշխատանքին մէջ: Մանուկներուն ամենէն դիւրին գործերը տուեք: Խակ աւելի մեծերուն՝ դժուար գործերը:

Երբ ճաշը պատրաստ ըլլայ, միասնաբար ըսէք հետեւեալ աղօթքը.

«ճաշակեցուք խաղաղութեամբ զկերակուրս, որ պարզեւեալ է մեզ ի Տեառնէ, օրինեալ է Տէր ի պարզեւս իւր Ամէն»:

Ծրագրեցէք ձեր պատրաստածը տանելու այն անձին զոր ընտրեցիք: Կրնաք նաեւ զայն ձեր տունը իրաւիրեւ, միասին ուտելու համար պատրաստուածը: